



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԾՐՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԷՆՍԻՆՈՅԻ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու՝ Ղրպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հայց. Առաքելական եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեքշաբթի, 6 Հոկտեմբեր 2009-ի առաւօտուն, ունեցան իրենց հերթական հանդիպումը, օրակարգի վրայ ունենալով միացեալ ծրագիրներ ու գործակցութեան նախագիծեր:

Հանդիպումը տեղի ունեցաւ Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ մէջ, հիւրընկալութեամբ Արեւմտեան Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր:

Ժողովական աշխատանքներու սկսելէ առաջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ղրպտի Ուղղափառ համայնքի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոս, եւ Ասորի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Քափլան Արքեպիսկոպոս, եւ հոգեւորականները միացեալ աղօթքի պահ մը ունեցան, իւրաքանչիւրը երգելով ու աղօթելով իր լեզուով:

Առաջնորդ Սրբազան Հօր կողքին էին Քրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի զոյգ վարիչներ՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, եւ Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քիւլիւմեան, եւ Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քիւլիւմեան, եւ Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քիւլիւմեան:

Ժողովը սկսելէ առաջ, Առաջնորդ Սրբազան Հօր առաջնորդութեամբ, հիւրերը այցելեցին Ազգ. Ֆերահեան Վարժարանը, ապա հանդիպում մը ունեցան Վարժարանի տնօրէն՝ Տիար Ժան Գոսաքեանի հետ, որ ընդհանուր գիծերու մէջ ժողովականներուն ծանօթացուց Ամերիկայի տարածքին առաջին Երկրորդական այս Վարժարանի ծնունդին ու ձեռք բերած յաջողութեանց մասին:

Ժողովը սկսաւ աղօթքով: Ապա ժողովականները գեկուցում լսեցին յառաջիկայ Նոյեմբերի 21-ին, երեք եկեղեցիներու միջ-համայնքային Կիրակնօրեայ Վարժարաններու միօրեայ հաւաքի նախապատրաստական աշխատանքներու մասին, զոր ներկայացուց՝ Հայր Միւռն: Միօրեայ հաւաքը տեղի պիտի ունենայ Ասորիներու Ս. Եփրեմ Առաջնորդարանիստ Մայր Տաճարին մէջ, Պըրպէնք, եւ կը վայելէ խորհուրդի անդամ երեք եկեղեցիներու թեմակալ Առաջնորդներու հովանաւորութիւնը: Նաեւ գեկուցուեցաւ երիտասարդական միացեալ աշխատանքներու ապագայ

ծրագրի մասին: Ժողովը որոշեց յաւելեալ մղում տալ երիտասարդական խմբակներու գործունէութեան:

Ժողովը արժեւորեց նաեւ Սեպտեմբեր 24-ին տեղի ունեցած համատեղ Ս. Պատարագը, որ տեղի ունեցաւ Ղըպտի Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, Նորթրիտըի Ս. Մարիամ եւ Ս. Աթանասիոս Եկեղեցւոյ մէջ:

Ժողովական աշխատանքներու աւարտին տեղի ունեցաւ սիրոյ սեղան:

WESTERN PRELACY HOSTS MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

On the morning of Tuesday, October 6th, 2009, the Council of Oriental Orthodox Bishops met to discuss and draft future collaborative endeavors. The meeting took place at Holy Martyrs Church in Encino hosted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The day began with a joint prayer led by the Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, head of the Syriac Church, and H.G. Bishop Serapion, head of the Coptic Church, in which clergy from each of the churches also participated.

Joining the Prelate at the meeting were Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, as well pastor of Holy Martyrs Church Rev. Fr. Razmig Khatchadourian.

Prior to the start of the meeting, the Council had a chance to visit Ferrahian High School where they met with Principal Mr. John Kossakian, who gave a brief history of the school.

The official meeting started with the Prelate's opening prayer, after which Fr. Muron gave a report on the preparations taking place for the annual Oriental Orthodox Sunday School gathering which will be taking place on November 21st at St. Ephraim Syriac Orthodox Cathedral under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops. The future endeavors of the OOC youth group were also discussed, and an evaluation of the joint Divine Liturgy which was celebrated on September 24th at St. Mary and St. Athanasian Coptic Church took place.

The guests were hosted to lunch following the meeting.